

Հաստատված է
ՀԱԱՀ գիտական խորհրդում
„-----„ ----- 2016 թ.
(արձանագրություն №)

Վավերացնում եմ
Ս. Թարվերդյան
ռեկտոր
„-----„ ----- 2016 թ.

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՖԱԿՈՒԼՏԵՏՆԵՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿ ՈՒՆԵՑՈՂ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ

1. ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՄԱԳԻՍՏՐԱՏՈՒՐԱՅԻ ԲԱԺԻՆՆԵՐ

- 1.1 Ասպիրանտուրայի և մագիստրատուրայի բաժինների վարիչների ընտրության մասին հայտարարությունը ձևակերպվում է հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտորի հրամանով և ՀԱԱՀ-ի գիտական խորհրդի նիստից 30 օր առաջ հղվում է համապատասխան ուսումնագիտական ստորաբաժանումներին և հրապարակվում ՀԱԱՀ-ում:
- 1.2 Ասպիրանտուրայի և մագիստրատուրայի բաժնի վարիչի պաշտոնի թեկնածու կարող են առաջադրվել պրոֆեսորներ (դոկտորներ), որոնք համալսարանում ունեն առնվազն 5 տարվա գիտամանկավարժական աշխատանքի ստաժ, ինչպես նաև 10 և ավելի տարիների գիտամանկավարժական աշխատանքի ստաժ ունեցող դոցենտներ:
- 1.3 Ասպիրանտուրայի և մագիստրատուրայի բաժինների վարիչների թեկնածությունների առաջադրումը իրականացնում են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ֆակուլտետների գիտական խորհուրդները, ամբիոնները, ուսումնագիտական ստորաբաժանումները կամ գիտամանկավարժական անձնակազմի անդամները:
- 1.4 Առաջադրված թեկնածուի տարիքը չպետք է գերազանցի 65 տարին:

1.5 Ասպիրանտուրայի և մագիստրատուրայի բաժինների վարիչների թեկնածությունների ընտրությունները սահմանված կարգով իրականացվում է ՀԱԱՀ-ի գիտական խորհրդում:

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈՒԼԵԶ ԵՎ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

2.1 ՀԱԱՀ-ի քոլեջի և հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարանի տնօրենների ընտրության մասին հայտարարությունը ձևակերպվում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտորի հրամանող ՀԱԱՀ-ի գիտական խորհրդի նիստից 30 օր առաջ հղվում է համապատասխան ուսումնագիտական ստորաբաժանումներին և հրապարակվում է ՀԱԱՀ-ում:

2.2 ՀԱԱՀ Ա.Քոչինյանի անվան գյուղատնտեսական քոլեջի տնօրենի պաշտոնի թեկնածու կարող են առաջադրվել պրոֆեսորներ (դոկտորներ), որոնք համալսարանում ունեն առնվազն 5 տարվա գիտամանկավարժական աշխատանքի ստաժ, ինչպես նաև 10 և ավելի տարիների գիտամանկավարժական աշխատանքի ստաժ ունեցող դոցենտները, որոնք կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով վերապատրաստված են և ունեն հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր):

2.3 ՀԱԱՀ-ի քոլեջի և հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարանի տնօրենների թեկնածությունների առաջադրումը իրականացում են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ֆակուլտետների գիտական խորհուրդները, ամբիոնները, ուսումնագիտական ստորաբաժանումները կամ գիտամանկավարժական անձնակազմի անդամները:

2.4 Առաջադրված թեկնածուի տարիքը չպետք է գերազանցի 65 տարին:

2.5 ՀԱԱՀ-ի քոլեջի և հանրակրթական ծրագրերի ուսուցման վարժարանի տնօրենների թեկնածությունների ընտրությունները սահմանված կարգով իրականացվում է ՀԱԱՀ-ի գիտական խորհրդում:

3. «ԲԱԼԱՀՈՎԻՏ» ԵՎ «ՈՍԿԵՀԱՏ» ՈՒՍՈՒՄՆԱՓՈՐՁՆԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԻ (ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ) ՄԻԱՎՈՐՈՒՄ

3.1 «Բալահովիտ» և «Ոսկեհատ» ուսումնափորձնական մասնաճյուղերի (տնտեսությունների) միավորման տնօրենի ընտրության մասին հայտարարությունը ձևակերպվում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտորի հրամանով և ՀԱԱՀ-ի գիտական խորհրդի նիստից 30 օր առաջ հղվում է համապատասխան ուսումնագիտական ստորաբաժանումներին և հրապարակվում է ՀԱԱՀ-ում:

3.2 «Բալահովիտ» և «Ոսկեհատ» ուսումնափորձնական մասնաճյուղերի (տնտեսությունների) միավորման գլխավոր տնօրենի թեկնածությունները առաջադրվում են 65 տարին չգերազանցած գիտությունների թեկնածուներից կամ ագրոպարենային ոլորտում արտադրության ղեկավարի առնվազն 3 տարվա ստաժ ունեցող Հայաստանի ազգային ագրարային համալսարանում աշխատող անձինք: Հավակնորդը պետք է ունենա ագրոպարենային ոլորտի բազային կրթություն:

3.3 «Բալահովիտ» և «Ոսկեհատ» ուսումնափորձնական մասնաճյուղերի (տնտեսությունների) միավորման տնօրենի թեկնածությունների առաջադրումը իրականացնում են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ֆակուլտետների գիտական խորհուրդները, ամբիոնները, ուսումնագիտական ստորաբաժանումները կամ գիտամանկավարժական անձնակազմի անդամները և տնտեսությունների աշխատակիցները:

3.4 «Բալահովիտ» և «Ոսկեհատ» ուսումնափորձնական մասնաճյուղերի (տնտեսությունների) միավորման գլխավոր տնօրենի թեկնածությունների ընտրությունները սահմանված կարգով իրականացվում է ՀԱԱՀ-ի գիտական խորհրդում:

4. ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ

4.1 Հանրակրթական և միջին մասնագիտական ծրագրերի ուսուցման կենտրոնի գլխավոր տնօրենի ընտրության մասին հայտարարությունը ձևակերպվում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտորի հրամանով և ՀԱԱՀ-

ի գիտական խորհրդի նիստի 30 օր առաջ հղվում է համապատասխան ուսումնագիտական ստորաբաժանումներին և հրապարակվում է ՀԱԱՀ-ում:

4.2 Հանրակրթական և միջին մասնագիտական ծրագրերի ուսուցման կենտրոնի գլխավոր տնօրենի թեկնածությունները առաջադրում են՝ 65 տարին չգերազանցած գիտությունների դոկտորներից (թեկնածուներից), ովքեր ունեն 10 և ավելին տարիների ուսումնագիտական ստաժ, որոնք կրթության պետական կառավարման լիազորված մարմնի սահմանած կարգով վերապատրաստված են և ունեն հաստատության ղեկավարման իրավունք (հավաստագիր):

4.3 Առաջադրված թեկնածուի տարիքը չպետք է գերազանցի 65 տարին:

4.4 Հանրակրթական և միջին մասնագիտական ծրագրերի ուսուցման կենտրոնի գլխավոր տնօրենի թեկնածությունների առաջադրումը իրականացնում են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ֆակուլտետների գիտական խորհուրդները, ամբիոնները, ուսումնագիտական ստորաբաժանումները կամ գիտամանկավարժական անձնակազմի անդամները:

4.5 Հանրակրթական և միջին մասնագիտական ծրագրերի ուսուցման կենտրոնի գլխավոր տնօրենի թեկնածությունների ընտրությունները սահմանված կարգով իրականացվում է ՀԱԱՀ-ի գիտական խորհրդում:

5. ՀԵՌԱԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

5.1 Հեռակա ուսուցման դեպարտամենտի պետի ընտրության մասին հայտարարությունը ձևակերպվում է Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտորի հրամանով և ՀԱԱՀ-ի գիտական խորհրդի նիստից 30 օր առաջ հղվում է համապատասխան ուսումնագիտական ստորաբաժանումներին և հրապարակվում է ՀԱԱՀ-ում:

5.2 Հեռակա ուսուցման դեպարտամենտի պետի թեկնածությունները առաջադրվում են՝ 65 տարին չգերազանցած գիտությունների դոկտորներից (թեկնածուներից), ովքեր ունեն 10 և ավելի տարիների ուսումնագիտական ստաժ:

5.3 Հեռակա ուսուցման դեպարտամենտի պետի թեկնածությունների առաջադրումը իրականացնում են Հայաստանի ազգային ագրարային համալսարանի

ֆակուլտետների գիտական խորհուրդները, ամբիոնները, ուսումնագիտական ստորաբաժանումները կամ գիտամանկավարժական անձնակազմի անդամները:

5.4 Հեռակա ուսուցման դեպարտամենտի պետի թեկնածությունների ընտրությունները սահմանված կարգով իրականացվում է ՀԱԱՀ-ի գիտական խորհրդում: